

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

Ոԅ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 թվականի մարտի 5-ի 2008/38/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ, որով սահմանվում է որոշակի սննդային նպատակների համար կենդանիների կերանյութերի նպատակային օգտագործման ցանկը

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(Կողավորված տարբերակ)

(ՊՏ L 062, 06.03.2008թ., էջ 9)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		թիվ	էջ	ամսաթիվ
ՈՄ1	Հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 30-ի L 202 48 31.07.2008թ. 2008/82/ԵՀ հրահանգ. Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ			
ՈՄ2	Հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 22-ի L 306 42 23.11.2010թ. թիվ 1070/2010 կանոնակարգ (ԵՄ)			

Ոԅ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 թվականի մարտի 5-ի 2008/38/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ, որով սահմանվում է որոշակի սննդային նպատակների համար կենդանիների կերանյութերի նպատակային օգտագործման ցանկը

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(Կողավորված տարբերակ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի՝ որոշակի սննդային նպատակների համար նախատեսված կերային նյութերի վերաբերյալ 1993 թվականի սեպտեմբերի 13-ի 93/74/ԵՏՀ հրահանգը¹ եւ, մասնավորապես, դրա 6(ա) հոդվածը,

Քանի որ

1) Հանձնաժողովի 1994 թվականի հուլիսի 25-ի 94/39/ԵՀ հրահանգը, որով սահմանվում է որոշակի սննդային նպատակների համար կենդանիների կերանյութերի նպատակային օգտագործման ցանկը², մի քանի անգամ զգալիորեն փոփոխվել է³: Հստակության եւ ողջամտության նկատառումներից ելնելով՝ նշված Հրահանգը պետք է կողավորվի,

2) 93/74/ԵՏՀ հրահանգով նախատեսվում է որոշակի սննդային նպատակների համար կենդանիների կերանյութերի նպատակային օգտագործման ստույգ ցանկի սահմանումը: Այդ ցանկում պետք է նշել ճշգրիտ օգտագործումը, այն է՝ կոնկրետ սննդային նպատակը, հիմնական սննդային հատկանիշները, մականշման հայտարարագրերը եւ, անհրաժեշտության դեպքում, պիտակավորման հատուկ պահանջները,

3) ներկայումս որոշ սննդային նպատակներ չեն կարող ներառվել նպատակային օգտագործման ցանկում՝ տնային կենդանիների կերային նյութերի կալորիականության եւ կերերի դիետիկ մանրաթելի նկատմամբ հսկողության Համայնքային մեթոդների բացակայության հետեւանքով: Այս ցանկն ավարտուն տեսք պետք է ստանա այս

¹ ՊՏ L 237, 22.09.1993թ., էջ 23: Թիվ 806/2003 (ԵՀ) կանոնակարգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 1):

² ՊՏ L 207, 10.08.1994թ., էջ 20: 2008/4/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 6, 10.01.2008թ., էջ 4):

³ Տե՛ս II հավելված, Ա մաս:

մեթոդներն ընդունելուն պես,

4) սահմանված ցանկը կարող է փոփոխվել ըստ անհրաժեշտության՝ ելնելով գիտական և տեխնիկական գիտելիքների զարգացումներից,

5) սույն Հրահանգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

6) սույն Հրահանգը չպետք է հակասի II հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Անդամ պետությունները պահանջում են, որ 93/74/ԵՏՀ հրահանգի իմաստով որոշակի սննդային նպատակների համար նախատեսված կերային նյութերը շուկա հանվեն, միայն եթե նրանց նպատակային օգտագործումները ներառված են սույն Հրահանգի I հավելվածի Բ մասում, և եթե դրանք բավարարում են I հավելվածի այդ մասով սահմանված մյուս դրույթները:

Ավելին, անդամ պետություններն ապահովում են I հավելվածի Ա մասի «Ընդհանուր դրույթներ» -ով սահմանված դրույթների պահպանումը:

Հոդված 2

II հավելվածի Ա մասում նշված հրահանգներով փոփոխված 94/39/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով II հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգին արված հղումները մեկնաբանվում են որպես սույն Հրահանգին արված հղումներ եւ ընթերցվում են ըստ III հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի:

Հոդված 3

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հուլիսի 31-ից:

Հոդված 4

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՄԱՍ Ա

Ընդհանուր դրույթներ

1. Եթե Բ մասի 2-րդ սյունակում նշված սննդային հատկանիշների ավելի քան մեկ խումբ «Ե (կամ)»-ով է նշված միեւնույն սննդային նպատակի համար, արտադրողն ունի հիմնական հատկանիշներից յուրաքանչյուրը կամ երկու խումբն էլ օգտագործելու տարբերակ՝ 1-ին սյունակում սահմանված սննդային նպատակին հասնելու համար: Յուրաքանչյուր տարբերակի համար համապատասխան մակնշման հայտարարագրերը բերված են դրանց դիմաց՝ 4-րդ սյունակում:

2. Եթե Բ մասի 2-րդ կամ 4-րդ սյունակում նշված է հավելումների մի խումբ, օգտագործված հավելումը (հավելումները) պետք է թույլատրվեն Եվրոպական պառլամենտի Եւ Խորհրդի թիվ 1831/2003 (ԵՀ) կանոնակարգով⁴ որպես կոնկրետ հիմնական հատկանիշին համապատասխանող:

3. Եթե Բ մասի 4-րդ սյունակով պահանջվում է (են) բաղադրամասերի կամ անալիզային բաղադրիչների աղբյուրը (աղբյուրները), արտադրողը պետք է ճշգրիտ հայտարարագիր կազմի (օրինակ՝ բաղադրամասի (բաղադրամասերի) կոնկրետ անվանումը, կենդանու տեսակը կամ կենդանու մասը), որը թույլ կտա գնահատել կերային նյութերի համապատասխանությունը համապատասխան հիմնական սննդային հատկանիշներին:

4. Եթե Բ մասի 4-րդ սյունակով պահանջվում է նյութի հայտարարագիրը, որը թույլատրված է նաեւ որպես հավելանյութ, Եւ որի մեջ առկա է «ընդհանուր» բառը, ապա հայտարարագրված բաղադրությունը պետք է, ըստ անհրաժեշտության, վերաբերի բնականորեն առկա քանակությանը, երբ ոչինչ ավելացված չէ, կամ, շեղվելով Խորհրդի 70/524/ԵՏՀ հրահանգից⁵, բնականորեն առկա նյութի ընդհանուր քանակությունը Եւ այն քանակությունը, որն ավելացվել է որպես հավելանյութ:

5. «Եթե ավելացված է» նշումով հայտարարագրերը, որոնք պահանջվում են Բ մասի 4-րդ սյունակով, պարտադիր են, եթե բաղադրամասը կամ հավելանյութը ներմուծվել է կամ

⁴ ՊՏ L 268, 18.10.2003թ., էջ 29:

⁵ ՊՏ L 270, 14.12.1970թ., էջ 1:

քանակությունն ավելացվել է հատուկ՝ կոնկրետ սննդային նպատակին հասնելու նպատակով:

6. Բ մասի 4-րդ սյունակին համապատասխան տրվող հայտարարագրերը, որոնք վերաբերում են անալիզային բաղադրիչներին եւ հավելանյութերին, պետք է լինեն քանակական:

7. Բ մասի 5-րդ սյունակում նշված օգտագործման առաջարկվող ժամանակահատվածը ցույց է տալիս այն շրջանը, որի ընթացքում սովորաբար պետք է հասնել սննդային նպատակին: Արտադրողները կարող են նշել օգտագործման ավելի ստույգ ժամկետներ՝ հստակ սահմանված ժամանակահատվածում:

8. Եթե որեւէ կերային նյութ նախատեսված է մեկից ավելի կոնկրետ սնուցման նպատակին հասնելու համար, ապա այն պետք է ենթարկվի Բ մասի համապատասխան գրառումներին:

9. Որոշակի սնուցման նպատակների համար նախատեսված լրացակերերի դեպքում պիտակի վրա զետեղված օգտագործման ցուցումները պետք է օրական կերաբաժնի բալանսի վերաբերյալ ցուցում պարունակեն:

Կոնկրետ սնուցման նպատակ	Հիմնական սննդային հատկանիշներ	Կենդանիների տեսակ կամ կատեգորիա	Մակնշման հայտարարագրեր	Առաջարկվող ժամանակահատված	Այլ դրույթներ
(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)
ՈՄ1					
Երիկամային ֆունկցիայի խթանում՝ քրոնիկ երիկամային անբավարարության դեպքում (1)	Ֆոսֆորի ցածր մակարդակ եւ սպիտակուցի սահմանափակ մակարդակ, բայց՝ բարձր որակի	Շներ եւ կատուներ	<ul style="list-style-type: none"> — Սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ) — Կալցիում — Ֆոսֆոր — Կալիում — Նատրիում — Հիմնական ճարպաթթուների պարունակություն 	Սկզբում՝ մինչեւ ամիս (2)	6 Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը խորհրդակցել անասնաբույժի հետ:» Օգտագործման ցուցումներում նշել.

			(եթե ավելացված են)		«Ջուրը պետք է մշտապես հասանելի լինի:»
կամ					
Ֆոսֆորի սահմանափակ ներծծում՝ լանթանի կարբոնատի օկտահիդրատի ներմուծման միջոցով	Հասուն կատուներ	<ul style="list-style-type: none"> — Սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ) — Կալցիում — Ֆոսֆոր — Կալիում — Նատրիում — Լանթանի կարբոնատի օկտահիդրատ — Հիմնական ճարպաթթուների պարունակություն (եթե ավելացված 	Սկզբում՝ մինչև 6 ամիս (2)	6	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p> <p>Օգտագործման ցուցումներում նշել.</p> <p>«Ջուրը պետք է մշտապես հասանելի լինի:»</p>

			են)		
Ոԅ					
Ստրուվիտային քարերի լուծում(3)	— Մեզը թթվայնացնող հատկություններ, մազնեզիումի ցածր մակարդակ, եւ սպիտակուցի սահմանափակ մակարդակ, բայց՝ բարձր որակի	Շներ	<ul style="list-style-type: none"> — Սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ) — Կալցիում — Ֆոսֆոր — Նատրիում — Մազնեզիում — Կալիում — Քլոր — Ծծումբ — Մեզը թթվայնացնող նյութեր 	5-ից 12 շաբաթ	<p>Օգտագործման ցուցումներում նշել.</p> <p>«Ջուրը պետք է մշտապես հասանելի լինի:»</p> <p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>
	— Մեզը թթվայնացնող	Կատուներ	— Կալցիում		

	<p>հատկություններ եւ մագնեզիումի ցածր մակարդակ</p>		<ul style="list-style-type: none"> — Ֆոսֆոր — Նատրիում — Մագնեզիում — Կալիում — Քլոր — Ծծումբ — Ընդհանուր թաուրին — Մեզը թթվայնացնող նյութեր 		
<p>Իսառը քարերի գոյացման կրկնության կրճատում (3)</p>	<p>Մեզը թթվայնացնող հատկություններ եւ մագնեզիումի չափավոր մակարդակ</p>	<p>Շներ եւ կատուներ</p>	<ul style="list-style-type: none"> — Կալցիում — Ֆոսֆոր — Նատրիում — Մագնեզիում 	<p>Մինչեւ 6 ամիս</p>	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը խորհրդակցել</p>

			<ul style="list-style-type: none"> — Կալիում — Քլոր — Ծծումբ — Մեզը թթվայնացնող նյութեր 		անասնաբույժի հետ:»	
Միզաթթվական (ուրատային) քարերի գոյացման կրճատում	Պուրինների մակարդակ, սպիտակուցի մակարդակ, բարձր որակի	ցածր ցածր բայց՝	Շներ եւ կատուներ	Սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ)	Մինչեւ 6 ամիս, սակայն միզաթթվի նյութափոխանակության անդառնալի խանգարման դեպքերում՝ օգտագործել ամբողջ կյանքի ընթացքում	Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»
Օքսալատային քարերի գոյացման կրճատում	Կալցիումի մակարդակ, վիտամինի մակարդակ եւ	ցածր D ցածր եւ մեզը	Շներ եւ կատուներ	<ul style="list-style-type: none"> — Ֆոսֆոր — Կալցիում — Նատրիում 	Մինչեւ 6 ամիս	Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը

	<p>հիմնայնացնող հատկություններ</p>		<ul style="list-style-type: none"> — Մագնեզիում — Կալիում — Քլոր — Ծծումբ — Ընդհանուր վիտամին D — Հիդրօքսիպրոլին — Մեզը հիմնայնացնող նյութեր 		<p>խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>
<p>Ցիստինային քարերի գոյացման կրճատում</p>	<p>Սպիտակուցի ցածր մակարդակ, ծծմբային ամինաթթուների չափավոր մակարդակ եւ մեզը հիմնայնացնող հատկություններ</p>	<p>Շներ եւ կատուներ</p>	<ul style="list-style-type: none"> — Ընդհանուր ծծմբային ամինաթթուներ — Նատրիում — Կալիում — Քլոր 	<p>Սկզբում՝ մինչեւ 1 տարի</p>	<p>Փաթեթի, բեռնարկի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը</p>

			<ul style="list-style-type: none"> — Ծծումբ — Մեզը <p>հիմնայնացնող նյութեր</p>		խորհրդակցել անասնաբույժի հետ:»
Բաղադրամասի և սննդանյութի նկատմամբ զգայունության կրճատում (4)	<ul style="list-style-type: none"> — Առանձին սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ) 	Շներ և կատուներ	<ul style="list-style-type: none"> Սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ) — Հիմնական ճարպաթթուների պարունակություն (եթե ավելացված են) 	3-ից 8 շաբաթ. եթե ավերգիայի նշաններն անհետանում են, այս կերը կարելի է օգտագործել անորոշ ժամկետով	
	և (կամ)				
	<ul style="list-style-type: none"> — Առանձին ածխաջրերի աղբյուր (աղբյուրներ) 		<ul style="list-style-type: none"> — Ածխաջրերի աղբյուր (աղբյուրներ) — Հիմնական ճարպաթթուների պարունակություն (եթե ավելացված են) 		

<p>Աղիների ներծծման սուր խանգարումների կրճատում</p>	<p>Էլեկտրոլիտների և խիստ դյուրամարս բաղադրամասերի բարձր մակարդակ</p>	<p>Շներ և կատուներ</p>	<p>— Խիստ դյուրամարս բաղադրամասեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության</p> <p>— Նատրիում</p> <p>— Կալիում</p> <p>— Լորձային նյութերի աղբյուր (աղբյուրներ) (եթե ավելացված են)</p>	<p>1-ից 2 շաբաթ</p>	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>— «Սուր լուծի ժամանակ և դրանից ապաքինվելու ընթացքում:»</p> <p>— «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>
<p>Մարսողության խանգարման կոմպենսացիա (5)</p>	<p>Խիստ դյուրամարս բաղադրամասեր և ճարպի ցածր մակարդակ</p>	<p>Շներ և կատուներ</p>	<p>Խիստ դյուրամարս բաղադրամասեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության</p>	<p>3-ից 12 շաբաթ, սակայն ենթաստամոքսային գեղձի քրոնիկ անբավարարության դեպքում՝ օգտագործել ամբողջ</p>	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>

				կյանքի ընթացքում	
Սրտի ֆունկցիայի խթանում՝ քրոնիկ սրտային անբավարարության դեպքում	Նատրումի ցածր մակարդակ եւ K/Na-ի բարձր հարաբերակցության	Շներ եւ կատուներ	<ul style="list-style-type: none"> — Նատրիում — Կալիում — Մագնեզիում 	Սկզբում՝ մինչեւ 6 ամիս	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>
Գլյուկոզայի մատակարարման կարգավորում (շաքարային դիաբետ)	Գլյուկոզայի արտադրությունն արագացնող ածխաջրերի ցածր մակարդակ	Շներ եւ կատուներ	<ul style="list-style-type: none"> — Ածխաջրերի աղբյուր (աղբյուրներ) — Ածխաջրերի մշակում՝ ըստ անհրաժեշտության — Օսլա — Ընդհանուր 	Սկզբում՝ մինչեւ 6 ամիս	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը խորհրդակցել</p>

			<p>շաքար</p> <p>— Ֆրուկտոզա (եթե ավելացված է)</p> <p>— Հիմնական ճարպաթթուների պարունակություն (եթե ավելացված են)</p> <p>— Կարճ եւ միջին չափի շղթա ունեցող ճարպաթթուների աղբյուր (աղբյուրներ) (եթե ավելացված են)</p>		անասնաբույժի հետ:»
<p>Լյարդի ֆունկցիայի խթանում՝ լյարդի քրոնիկ անբավարարության դեպքում</p>	<p>— Բարձրակարգ սպիտակուց, սպիտակուցի չափավոր մակարդակ, հիմնական ճարպաթթուների</p>	Շներ	<p>— Սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ)</p> <p>— Հիմնական ճարպաթթուների պարունակություն</p> <p>— Խիստ</p>	Սկզբում՝ մինչեւ 6 ամիս	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը</p>

	<p>բարձր մակարդակ եւ խիստ դյուրամարս ածխաջրերի բարձր մակարդակ</p>		<p>դյուրամարս ածխաջրեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության — Նատրիում — Ընդհանուր պղինձ</p>		<p>երկարաձգելը, խորհրդակցել անասնաբույժի հետ:» Օգտագործման ցուցումներում նշել. «Ջուրը պետք է մշտապես հասանելի լինի:»</p>
	<p>— Բարձրակարգ սպիտակուց, սպիտակուցի չափավոր մակարդակ եւ հիմնական ճարպաթթուների բարձր մակարդակ</p>	<p>Կատուներ</p>	<p>— Սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ) — Հիմնական ճարպաթթուների պարունակություն — Նատրիում — Ընդհանուր պղինձ</p>	<p>Սկզբում՝ մինչեւ 6 ամիս</p>	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը, խորհրդակցել անասնաբույժի հետ:» Օգտագործման ցուցումներում նշել.</p>

						«Ջուրը պետք է մշտապես հասանելի լինի:»	
Լիպիդների նյութափոխանակության կարգավորում՝ հիպերլիպիդեմիայի դեպքում	Ճարպերի մակարդակ հիմնական ճարպաթթուների բարձր մակարդակ	Գաժր եւ կատուներ	Շներ եւ կատուներ	— Հիմնական ճարպաթթուների պարունակություն — n-3 ճարպաթթուների քանակություն (եթե ավելացված են)	Սկզբում՝ մինչեւ ամիս	2	Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը, խորհրդակցել անասնաբույժի հետ:»
Լյարդում պղնձի քանակության կրճատում	Պղնձի մակարդակ	Գաժր	Շներ	Պղնձի ընդհանուր մակարդակ	Սկզբում՝ ամիս	մինչեւ 6	Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը խորհրդակցել

					անասնաբույժի հետ:»
Մարմնի ավելորդ քաշի կրճատում	Էներգիայի ցածր խտություն	Շներ եւ կատուներ	Կալորիականություն	Մինչեւ մարմնի նախանշված քաշին հասնելը	Օգտագործման ցուցումներում պետք է նշել համապատասխան օրական չափաբաժինը:
Մենդային վերականգնում, ապաքինում (6)	Էներգիայի բարձր խտություն, հիմնական սննդանյութերի եւ խիստ դյուրամարս բաղադրամասերի խիտ կոնցենտրացիա	Շներ եւ կատուներ	— Խիստ դյուրամարս բաղադրամասեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության — Կալորիականություն — n-3 եւ n-6 ճարպաթթուների քանակություն (եթե ավելացված են)	Մինչեւ վերականգնվելը	Այն կերային նյութերի դեպքում, որոնք հատուկ ներկայացված են խողովակով կերակրման համար,- փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Ընդունումը՝ անասնաբույժի վերահսկողության ներքո:»
Մաշկի ֆունկցիայի	Հիմնական	Շներ եւ կատուներ	Հիմնական	Սկզբում՝ մինչեւ 2	Փաթեթի, բեռնարկղի կամ

խթանում՝ մաշկային ախտահարման (դերմատոզ) եւ ուժեղ մազաթափության դեպքում	ճարպաթթուների բարձր մակարդակ		ճարպաթթուների պարունակություն	ամիս	պիտակի վրա նշել. «խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»
--	------------------------------	--	-------------------------------	------	--

ՈՄ2

Հողերում նյութափոխանակության խթանում՝ ոսկրահողաբորբի (օստեոարտրիտ) դեպքում	Շներ. Ընդհանուր օմեգա-3 ճարպաթթուների (3,3%) եւ էյկոզապենտաենային թթվի (EPA) (0,38%) չոր զանգվածի նվազագույն քանակություն:	Շներ եւ կատուներ	Շներ. — Ընդհանուր օմեգա-3 ճարպաթթուներ — Ընդհանուր էյկոզապենտաենային թթու — Ընդհանուր E վիտամին Կատուներ.	Սկզբում՝ մինչեւ 3 ամիս	խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը, խորհրդակցել վիրաբույժ-անասնաբույժի հետ:
--	---	------------------	---	------------------------	--

	<p>Ե վիտամինի համապատասխան մակարդակ</p> <p>Կատուներ.</p> <p>Ընդհանուր օմեգա-3 ճարպաթթուների (1,2%) եւ դոկոզահեքսաէն ալին թթվի (DHA) (0,28%) չոր զանգվածի նվազագոյն քանակություն:</p> <p>Մեթիոնինի եւ մանգանի բարձր մակարդակ</p> <p>Ե վիտամինի համապատասխ</p>		<p>— Ընդհանուր օմեգա-3 ճարպաթթուներ</p> <p>— Ընդհանուր դոկոզահեքսաէն ալին թթու</p> <p>— Ընդհանուր մեթիոնին</p> <p>— Ընդհանուր մանգան</p> <p>— Ընդհանուր Ե վիտամին</p>		
--	--	--	---	--	--

	ան մակարդակ				
ՈԾ					
Հետծննդյան մաստիտի ռիսկի կրճատում	— Կալցիումի ցածր մակարդակ	Կաթնատու կովեր	— Կալցիում	1-ից 4 շաբաթ՝ նախքան ծինը	Օգտագործման ցուցումներում նշել. «Դադարեցնել կերակրելը ծնից հետո»
	եւ (կամ)		— Ֆոսֆոր		
	— Կատիոնների/անիոնների ցածր հարաբերակցություն		— Մագնեզիում		
	կամ		— Կալցիում	1-ից 4 շաբաթ՝ նախքան ծինը	Օգտագործման ցուցումներում նշել. «Դադարեցնել կերակրելը ծնից հետո»
	— Ֆոսֆոր		— Նատրիում		
— Ցեոլիտի բարձր	— Կալիում	— Բլոր			
		— Ծծումբ	Արհեստական	2 շաբաթը՝ նախքան	Օգտագործման

<p>մակարդակ (արհեստական նատրիում- ալյումինային սիլիկատներ)</p>		<p>նատրիում-ալյումինի սիլիկատի քանակություն</p>	<p>ծինը</p>	<p>ցուցումներում նշել. — «Սահմանափակել կերի քանակն այնքան, որ յուրաքանչյուր կենդանուն տրվող նատրումի ալյումինային- սիլիկատների օրական չափաբաժինը չգերազանցի 500 գրամը:» — «Դադարեցնել կերակրելը ծնից հետո»</p>
<p>կամ</p>				
<p>— Կալցիումի բարձր մակարդակ՝</p>		<p>Ընդհանուր կալցիումի քանակություն,</p>	<p>Ծննդաբերության առաջին նշանների</p>	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p>

	<p>հեշտ յուրացվող կալցիումական աղերի ձեուվ</p>		<p>կալցիումի աղբյուրներ եւ համապատասխան քանակ</p>	<p>սկզբից մինչեւ ծննդաբերությանը հաջորդող երկու օրերը</p>	<p>— Օգտագործման ցուցումը, այն է՝ ծնից առաջ եւ հետո օգտագործման թիվն ու ժամանակահատվածը :</p> <p>— Տեքստը՝ «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը խորհրդակցել մասնագետ-սննդաբանի հետ»:</p>
<p>Կետոզի ոչսկի կրճատում (7) (8)</p>	<p>Գլյուկագենային էներգիայի աղբյուրներ ապահովող բաղադրամասեր</p>	<p>Կաթնատու կովեր եւ մաքիներ</p>	<p>— Գլյուկագենային էներգիայի աղբյուրներ ապահովող բաղադրամասեր</p>	<p>3-ից 6 շաբաթ՝ ծնից հետո (9)</p> <p>Վերջին 6 շաբաթը՝ նախքան ծինը, եւ առաջին 3 շաբաթը՝</p>	

			<ul style="list-style-type: none"> — Պրոպիլենգլիկոլ (եթե ավելացվել է որպես գլյուկոզայի նախորդ) — Գլիցերոլ (եթե ավելացվել է որպես գլյուկոզայի նախորդ) 	<p>ծնից հետո (10)</p>	
<p>Տետանիայի (հիպոմագնեզեմիա) ռիսկի կրճատում</p>	<p>Մագնեզիումի բարձր մակարդակ, հեշտ յուրացվող ածխաջրեր, սպիտակուցի չափավոր մակարդակ և կալիումի մակարդակ</p>	<p>Որոճողներ</p>	<ul style="list-style-type: none"> — Օսլա — Ընդհանուր շաքարներ — Մագնեզիում — Նատրիում — Կալիում 	<p>3-ից 10 շաբաթ՝ խոտի արագ աճի ժամանակահատվածում</p>	<p>Օգտագործման ցուցումները պետք է պարունակեն օրական կերաբաժնի բալանսի վերաբերյալ ցուցում՝ մանրաթելի և էներգիայի հեշտ յուրացվող աղբյուրների ներառման առումով:</p> <p>Ոչխարների համար նախատեսված կերային</p>

					<p>նյութերի դեպքում փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Հատկապես լակտացիոն շրջանում գտնվող մաքիների համար:»</p>
Ացիդոզի կրճատում	<p>ռիսկի Հեշտ ֆերմենտացվող ածխաջրերի ցածր մակարդակ եւ բարձր բուֆերային ունակություն</p>	Որոճողներ	<p>— Օսլա</p> <p>— Ընդհանուր շաքարներ</p>	Առավելագույնը՝ 2 ամիս (11)	<p>Օգտագործման ցուցումները պետք է պարունակեն օրական կերաբաժնի բալանսի վերաբերյալ խորհուրդ՝ մանրաթելի եւ հեշտ ֆերմենտացվող ածխաջրերի ներառման առումով:</p> <p>Կաթնատու կովերի համար նախատեսված կերային նյութերի դեպքում փաթեթի,</p>

					<p>բեռնարկի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Հատկապես բարձր մթերատու կովերի համար:»</p> <p>Բտման (գիրացման) տակ գտնվող որոճողների համար նախատեսված կերային նյութերի դեպքում փաթեթի, բեռնարկի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Հատկապես ինտենսիվ բուծող կենդանիների համար:» (12)</p>
Ջրի եւ էլեկտրոլիտների հավասարակշռությ	Գլխավորապես էլեկտրոլիտներ եւ հեշտ յուրացվող	Հորթեր Խոճկորներ Գառներ	— Ածխաջրերի աղբյուր (աղբյուրներ)	1-ից 7 օր (1-ից 3 օր, եթե միայն բտվում են)	Փաթեթի, բեռնարկի կամ պիտակի վրա նշել. — «Մարսողական

ան կայունացում	ածխաջրեր	Ուլեր Քուռակներ	<ul style="list-style-type: none"> — Նատրիում — Կալիում — Քլոր 		<p>խանգարման (լուծ) ոիսկի դեպքում, դրա ընթացքում եւ դրանից առողջացման դեպքում:»</p> <p>— «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>
Միզաքարային հիվանդության ոիսկի կրճատում	Ֆոսֆորի, մագնեզիումի ցածր մակարդակ եւ մեզը թթվայնացնող հատկություններ	Որոճողներ	<ul style="list-style-type: none"> — Կալցիում — Ֆոսֆոր — Նատրիում — Մագնեզիում — Կալիում — Քլոր — Ծծումբ 	Մինչեւ 6 շաբաթ	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Հատկապես ինտենսիվ բուվող մատղաշ կենդանիների համար:»</p> <p>Օգտագործման ցուցումներում նշել.</p> <p>«Ջուրը պետք է մշտապես</p>

			— Մեզը հիմնայնացնող նյութեր		հասանելի լինի:»
Սթրեսային ռեակցիաների կրճատում	— Մագնեզիումի բարձր մակարդակ	Խոզեր	— Մագնեզիում	1-ից 7 օր	Ցուցումներ պետք է տրվեն այն իրավիճակների վերաբերյալ, որոնց դեպքում այս կերի օգտագործումը նպատակահարմար է:
	եւ (կամ)				
	— Խիստ դյուրամարս բաղադրամասեր		— Խիստ դյուրամարս բաղադրամասեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության — n-3 ճարպաթթուների քանակություն (եթե ավելացված են)		

Ֆիզիոլոգիական մարսողության կայունացում	— Ցածր բուֆերային ունակություն եւ խիստ դյուրամարս բաղադրամասեր	Խոճկորներ	<p>— Խիստ դյուրամարս բաղադրամասեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության</p> <p>— Բուֆերային ունակություն</p> <p>— Տոհպ նյութերի աղբյուր (աղբյուրներ) (եթե ավելացված են)</p> <p>— Լործային նյութերի աղբյուր (աղբյուրներ) (եթե ավելացված են)</p>	2-ից 4 շաբաթ	Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել. «Մարսողական խանգարման ռիսկի դեպքում, դրա ընթացքում եւ դրանից առողջացման դեպքում:»
	— Խիստ դյուրամարս	Խոզեր	— Խիստ դյուրամարս բաղադրամասեր՝		

	բաղադրամասեր		<p>ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության</p> <p>— Տոհպ նյութերի աղբյուր (աղբյուրներ) (եթե ավելացված են)</p> <p>— Լորձային նյութերի աղբյուր (աղբյուրներ) (եթե ավելացված են)</p>		
Փորկապության ռիսկի կրճատում	Աղիների աշխատանքը խթանող բաղադրամասեր	Արու խոզեր	Աղիների աշխատանքը խթանող բաղադրամասեր	10-ից 14 օր՝ նախքան ծինը, եւ 10-ից 14 օր՝ ծնից հետո	
Լյարդի ճարպակալման ռիսկի կրճատում	Ցածր էներգիա եւ նյութափոխանակության ընթացքում	Ածան հավեր	— Կալորիականության ն արժեք (հաշվվում	Մինչեւ 12 շաբաթ	

	<p>լիպիդներից փոխակերպվող էներգիայի բարձր հարաբերակցություն՝ պոլիչիագեցած ճարպաթթուների բարձր մակարդակով</p>		<p>է ըստ ԵՀ մեթոդի) — Նյութափոխանակու թյան ընթացքում լիպիդներից փոխակերպվող էներգիայի տոկոսային հարաբերություն — Պոլիչիագեցած ճարպաթթուների քանակություն</p>		
<p>Ներծծման խանգարման կոմպենսացիա</p>	<p>Հագեցած ճարպաթթուների ցածր մակարդակ եւ ճարպալույծ վիտամինների բարձր մակարդակ</p>	<p>Ընտանի թռչուններ՝ բացառությամբ սագերի եւ աղավնիների</p>	<p>— Ընդհանուր ճարպաթթուների նկատմամբ հագեցած ճարպաթթուների հարաբերակցությու նը</p>	<p>Ճտեր հանելուց հետո առաջին 2 շաբաթվա ընթացքում</p>	

			<p>— Ընդհանուր վիտամին A</p> <p>— Ընդհանուր վիտամին D</p> <p>— Ընդհանուր վիտամին E</p> <p>— Ընդհանուր վիտամին K</p>		
Բարակ աղիքի ֆունկցիայի քրոնիկ անբավարարության կոմպենսացիա	Խիստ դյուրամարս ածխաջրեր, սպիտակուցներ և ճարպեր	Ձիեր (13)	— Խիստ դյուրամարս ածխաջրերի աղբյուր (աղբյուրներ)՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության	Սկզբում՝ մինչև վեց ամիս	Ցուցումներ պետք է տրվեն այն իրավիճակների վերաբերյալ, որոնց դեպքում այս կերի օգտագործումը նպատակահարմար է, և կերակրման եղանակի, այդ թվում՝ օրական քիչ քանակությամբ հաճախ

					<p>կերակրելու վերաբերյալ: Փաթեթի, բեռնարկի կամ պիտակի վրա նշել. «Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը, խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>
<p>Հաստ աղիքի քրոնիկ մարսողական խանգարման կոմպենսացիա</p>	<p>Իսիստ դյուրամարս մանրաթել</p>	<p>Ձիեր</p>	<p>— Մանրաթելի աղբյուր (աղբյուրներ) — n-3 ճարպաթթուների քանակություն (եթե ավելացված են)</p>	<p>Սկզբում՝ մինչև վեց ամիս</p>	<p>Ցուցումներ պետք է տրվեն այն իրավիճակների վերաբերյալ, որոնց դեպքում այս կերի օգտագործումը նպատակահարմար է, եւ այս կերով կերակրման եղանակի վերաբերյալ:</p>

					<p>Փաթեթի, բեռնարկի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>
<p>Սթրեսային ռեակցիաների կրճատում</p>	<p>Խիստ դյուրամարս բաղադրամասեր</p>	<p>Ձիեր</p>	<p>— Մագնեզիում</p> <p>— Խիստ դյուրամարս բաղադրամասեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության</p> <p>— n-3 ճարպաթթուների քանակություն (եթե</p>	<p>Երկուսից շորս շաբաթ</p>	<p>Ցուցումներ պետք է տրվեն այն կոնկրետ իրավիճակների վերաբերյալ, որոնց դեպքում այս կերի օգտագործումը նպատակահարմար է:</p>

			ավելացված են)		
Ուժեղ քրտնարտադրությամբ ն դեպքերում էլեկտրոլիտների կորստի կոմպենսացիա	Գլխավորապես էլեկտրոլիտներ են հեշտ յուրացվող ածխաջրեր	Ձիեր	<ul style="list-style-type: none"> — Կալցիում — Նատրիում — Մագնեզիում — Կալիում — Քլոր — Գլյուկոզա 	Մեկից երեք օր	Ցուցումներ պետք է տրվեն այն իրավիճակների վերաբերյալ, որոնց դեպքում այս կերի օգտագործումը նպատակահարմար է: Եթե տվյալ կերը օրական կերաբաժնի զգալի մաս է կազմում, ցուցումներ պետք է տալ՝ կերի տեսակում կտրուկ փոփոխությունների վտանգը կանխելու նպատակով: Օգտագործման ցուցումներում նշել. «Ջուրը պետք է մշտապես

					հասանելի լինի:»
Մենդային վերականգնում, ապաքինում	Հիմնական սննդանյութերի եւ խիստ դյուրամարս բաղադրամասերի խիտ կոնցենտրացիա	Ձիեր	— Խիստ դյուրամարս բաղադրամասեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության — n-3 եւ n-6 ճարպաթթուների քանակություն (եթե ավելացված են)	Մինչեւ վերականգնվելը	Ցուցումներ պետք է տրվեն այն իրավիճակների վերաբերյալ, որոնց դեպքում այս կերի օգտագործումը նպատակահարմար է: Այն կերային նյութերի դեպքում, որոնք հատուկ ներկայացված են խողովակի միջոցով տրվելու համար, փաթեթի, բեռնարկի կամ պիտակի վրա նշել. «Ընդունումը՝ անասնաբույժի վերահսկողության ներքո:»

<p>Լյարդի ֆունկցիայի խթանում՝ լյարդի քրոնիկ անբավարարության դեպքում</p>	<p>Սպիտակուցի ցածր մակարդակ, բայց՝ բարձր որակի, եւ խիստ դյուրամարս ածխաջրեր</p>	<p>Ձիեր</p>	<p>— Սպիտակուցի եւ մանրաթելի աղբյուրներ</p> <p>— Խիստ դյուրամարս ածխաջրեր՝ ներառյալ նրանց մշակումը՝ ըստ անհրաժեշտության</p> <p>— Մեթիոնին</p> <p>— Խոլին</p> <p>— n-3 ճարպաթթուների քանակություն (եթե ավելացված են)</p>	<p>Սկզբում՝ մինչեւ վեց ամիս</p>	<p>Ցուցումներ պետք է տրվեն այդ կերով կերակրման եղանակի, այդ թվում՝ օրական քիչ քանակությամբ հաճախ կերակրելու վերաբերյալ:</p> <p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը խորհրդակցել անասնաբույժի հետ:»</p>
<p>Երիկամային ֆունկցիայի խթանում՝ քրոնիկ</p>	<p>Սպիտակուցի ցածր մակարդակ, բայց՝ բարձր որակի, եւ</p>	<p>Ձիեր</p>	<p>— Սպիտակուցի աղբյուր (աղբյուրներ)</p>	<p>Սկզբում՝ մինչեւ վեց ամիս</p>	<p>Փաթեթի, բեռնարկղի կամ պիտակի վրա նշել.</p> <p>«Խորհուրդ է տրվում</p>

Երիկամային անբավարարության դեպքում	Ֆոսֆորի մակարդակ ցածր		— Կալցիում — Ֆոսֆոր — Կալիում — Մագնեզիում — Նատրիում	նախքան օգտագործելը կամ նախքան օգտագործման ժամկետը երկարաձգելը խորհրդակցել անասնաբույժի հետ:» Օգտագործման ցուցումներում նշել. «Ջուրը պետք է մշտապես հասանելի լինի:»
--	-----------------------------	--	---	---

1) Անհրաժեշտության դեպքում արտադրողը կարող է նաեւ խորհուրդ տալ ժամանակավոր երիկամային անբավարարության դեպքում օգտագործելու համար:

2) Եթե կերային նյութը խորհուրդ է տրվում ժամանակավոր երիկամային անբավարարության դեպքում, ապա օգտագործման համար առաջարկվող ժամկետը պետք է լինի երկուսից չորս շաբաթ:

() Կատուների համար նախատեսված կերային նյութերի դեպքում կոնկրետ սննդային նպատակը կարելի է լրացնել «կատվազգիների մոտ միզուղիների ստորին հատվածի հիվանդություն» կամ «կատվազգիների ուռուլոգիական համախտանիշ (FUS)» նշումով:

4) Կոնկրետ ալերգիայի համար նախատեսված կերային նյութերի դեպքում «բաղադրամաս եւ սննդանյութ» նշումը կարող է փոխարինվել տվյալ ալերգիային կատարվող հղումով:

- 5) Արտադրողը կարող է կոնկրետ սննդային նպատակը լրացնել «ենթաստամոքսային գեղձի արտազատական ֆունկցիայի խանգարում» հղումով:
- 6) Կատուների համար նախատեսված կերային նյութերի դեպքում արտադրողը կարող է կոնկրետ սննդային նպատակը լրացնել «կատվազգիների լյարդի ճարպակալում» հղումով:
- 7) «Կետոզ» եզրը կարող է փոխարինվել «ացետոնեմիա»-յով:
- 8) Արտադրողները կարող են նաեւ խորհուրդ տալ օգտագործել կետոզից վերականգնվելու համար:
- 9) Կաթնատու կովերի համար նախատեսված կերային նյութերի դեպքում:
- 10) Մաքիների համար նախատեսված կերային նյութերի դեպքում:
- 11) Կաթնատու կովերի համար նախատեսված կերային նյութերի դեպքում՝ «կաթնատվությունն սկսելուց հետո առավելագույնը երկու ամիս»:
- 12) Նշել տվյալ որոճողների կատեգորիան:
- 13) Շատ ծեր կենդանիների կոնկրետ վիճակների համար հատուկ նախատեսված կերային նյութերի դեպքում (հեշտ յուրացվող բաղադրամասեր) «ծեր կենդանիներ»-ին արվող հղումը պետք է պարունակի կենդանիների տեսակի կամ կատեգորիայի վերաբերյալ նշում:

ՄԱՍ Բ

Նպատակային օգտագործումների ցանկ

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած ճանաչված հրահանգ՝ իր հաջորդական փոփոխությունների ցանկով

(2-րդ հոդվածում նշված)

Հանձնաժողովի 94/39/ԵՀ հրահանգ	(ՊՏԼ207, 10.08.1994թ., էջ 20)
Հանձնաժողովի 95/9/ԵՀ հրահանգ	(ՊՏ L 91, 22.04.1995թ., էջ 35)
Հանձնաժողովի 2002/1/ԵՀ հրահանգ	(ՊՏ L 5, 09.01.2002թ., էջ 8)
Հանձնաժողովի 2008/4/ԵՀ հրահանգ	(ՊՏ L 6, 10.01.2008թ., էջ 4)

ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման ժամկետների ցանկը

(2-րդ հոդվածում նշված)

Հրահանգ	Փոխատեղման ժամկետը
94/39/ԵՀ	1995 թվականի հունիսի 30-ը
95/9/ԵՀ	1995 թվականի հունիսի 30-ը
2002/1/ԵՀ	2002 թվականի նոյեմբերի 20-ը

2008/4/ԵՀ	2008 թվականի հուլիսի 30-ը
-----------	---------------------------

ՀԱՎԵԼՎԱԾ III

Համեմատական աղյուսակ

94/39/ԵՀ հրահանգ	Սույն Հրահանգը
Հոդված 1	Հոդված 1
Հոդված 2	—
—	Հոդված 2
Հոդված 3	Հոդված 3
—	Հոդված 4
Հավելված	Հավելված I
—	Հավելված II
—	Հավելված III